

Թեան միջոցին, Մակեդոնիայի խոռովութիւններու առիթով:

Նմանապէս, համաշխարհային պատերազմէն վերջը, երբ Օսմանի երկիրը հողեվարք կ'ապրէր, Մուստաֆա Քեմալ մը — Միթհազի եւ Թալէաթի դադափարական յաջորդը — յօրինեց իր «արմատական» ուժօրմները եւ մէկէն ի մէկ Թիւրքիան դարձուց «Չուիցերիա» մը — նոյն նպատակով:

Այդ բոլոր գուտ թիւրքական յեղաշրջումներու մէջ կը բացակայէր բուն ժողովրդական տարրը, կը բացակայէր յեղափոխական, դեմոկրատիկ ոգին եւ մտաւոր, կուլտուրական պատրաստութիւնը... Ահա թէ ինչու առաջին երկու յեղափոխութիւնները (1876-ի եւ 1908-ի) խայտառակօրէն վիժեցին, իսկ երրորդը, որ նոյնպէս միանգամայն անհամապատասխան է երկրի ընդհանուր քաղաքակրթական մակարդակին, կը պահպանուի միայն սուրիներու ոյժով...

Միթհազ փաշա ոչ միայն «Երիտասարդ Թիւրքիոյ» պարագլուխն էր, այլ եւ առաջնորդը համխալածական ու ղինուորական կուսակցութեան: Համխալածութիւնն էս այն ատենները գլուխ բարձրացուց, որպէս հակակշիռ համալսլովօնութեան:

Միացնել բոլոր իսլամ ժողովուրդները Ուսահրայց արշաւի մը մէջ ընդդէմ գեալուր պետութիւններու: Գեղեցիկ պատրանք մըն էր: Եւ «Երիտասարդ» թիւրքերը խանդավառութեամբ որդեգրեցին համխալածութեան դադափարը, ինչպէս որ անոնք առաջինները քարոզեցին համաթրքութեան կամ պանթուրանիզմի հաւատամքը...

Ահ, ինչպէ՛ս կը ցուէր այդ բոլոր թիւրք հայրենասէրներու սիրտը, ինչպէ՛ս կ'անիծէին, որ Մահմէտ Բ. Կ. Պոլիսը գրաւելէ ետք (1453 թ.), չէր հրամայեր քանի մը օրուան մէջ սրի քաշել ողջ քրիստոնեայ ազգաբնակիւթիւնը... Չէ՞ որ այնուհետեւ այլեւս չպիտի լինէին այդ բոլոր չարատանջ հարցերը — յունական, սերբիական, մարօնիտեան, կրետական, բուլղարական, հայկական, մակեդոնական եւ այլն — որոնց պատճառով կայսրութիւնը աստիճանաբար անդամա՛հատուեր է ու

հասեր յաւիտենական «հիւանդ մարդու» վիճակին:

Այդ ա՛խ ու վա՛խ— հառաչանքը ատամներու կըճտոցով կ'արձակէին թէ Միթհազ փաշա եւ թէ Էնվէր-Թալէաթ ու իրենց բոլոր յաջորդներն ու դադափարակիցները...

Ամէնուն նշանաբանն էր — «Թիւրքիան թիւրքերուն»: Հայկական կոտորածներէն շատ առաջ, 1876-ին Revue Britanique-ի Պոլսոյ թղթակիցը հետեւեալը կը գրէր.

«Թիւրք պետական մարդիկ համոզուեցան, որ Թիւրքիոյ թուլութիւնը կը բղխի իր անհամատարր կազմէն... Ատկից է սահա բնաջնջումի այն ծրագիրը՝ որ բիրտ ձեւով կը ցուցադրուի կիսապաշտօնական Իկտամի մէջ»...

Ուրեմն Միթհազի օրերուն իսկ... Եւ երբ չկրցան իրագործել բնաջնջումի այդ ծրագիրը եւրոպական Թիւրքիոյ մէջ, 1881 թուականէն ի վեր իրենց ուշադրութիւնն ուղղեցին դէպի ասիական Թիւրքիան, դէպի Հայաստան:

Նոյն եւրոպացի թղթակիցը այս տողերը կը գրէ 1881-ի դեկտեմբերին, հայ յեղափոխական զարթօնքէն տարիներ առաջ.

— «Սրբիւ Համիդ, օգտուելով իր հզօր դրացիներու ընձեռած ժամանակաւոր հանգիստէն, կ'ուզէ բնաջնջ ընել Տաւրոսեան լեռներու քրիստոնեայ տարրը եւ դարձնել երկիրը գուտ մահմետական»*):

Հայաստանի կոտորածները գուշակեր էր եւ մեր բարեկամ Լօրդ Բրայս: Բերլինի դաշնագրէն յետոյ, ըստ Բրայսի, դժուար էր նախատեսնել հակահայ արշաւանքը...

II

Թիւրք ազգայնականներու պարագլուխն էր Միթհազ փաշա եւ որոշեր էր ոչ միայն չլիջել բալկանեան սլաւներու պահանջներուն հանդէպ, այլ եւ արիւնի մէջ խեղդել անոնց ազատագրական թուիչքները: Անդլիայէն քաջալերուած՝ ան շարունակ կը ձգձգէր ուժօրմներու գործը:

Սերբիա եւ Մօնտէնեգրօ բուն կերպով

*) La Revue Britanique, December, 1881: Քաղ. Lavissee-ի Histoire Ge'ne'rale-ի մէջ: